# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## Հրավերի պարզաբանման մասին

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի սեպտեմբերի 07-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն**

**Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2026/5»**

**Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի հիմնադրման օրվան նվիրված տոնական միջոցառումների կազմակերպման ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2026/5» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ **2026 թվականի սեպտեմբերի 03-ին** ստացված հարցադրումները և դրա վերաբերյալ **2026 թվականի սեպտեմբերի 07-ին** տրամադրված պարզաբանումները.

**Հարցադրում 1:** «Մետաղական արգելապատնեշներ» տեխնիկական բնութագրում նշված է, որ Կատարողը պետք է ապահովի «մետաղական արգելապատնեշներ՝ մոտ», սակայն պահանջվող ընդհանուր երկարությունը կամ քանակը նշված չէ: Խնդրում ենք սահմանել արգելապատնեշների պահանջվող տեսակը, բարձրությունը, ընդհանուր գծամետրն ու տեղադրման սխեման:

**Պարզաբանում 1:** Մետաղական արգելապատնեշներ առնվազն 300 գծամետր, մեկ արգելապատնեշի երկարությունն առնվազն 2 մետր, բարձրությունը 1-1.1 մետր: Տեղադրման սխեման ըստ միջոցառման անցկացման վայրի:

**Հարցադրում 2:** «Արտաքին գովազդի ժամկետ» պահանջվում է միջոցառումից մեկ ամիս առաջ Չարենցավան համայնքի վարչական տարածքում տեղադրել երկու հատ 6*3 մ արտաքին գովազդ: Միջոցառումը նախատեսված է 2026 թվականի հոկտեմբերի 3-ին, մինչդեռ հայտերի վերջնաժամկետը 2026 թվականի սեպտեմբերի 10-ն է, և պայմանագիրը կարող է կնքվել դրանից հետո: Խնդրում ենք պարզաբանել՝ ընտրված մասնակիցն ինչ ամսաթվից է պարտավոր տեղադրել արտաքին գովազդը, և արդյոք փաստացի կատարման ժամկետը կհաշվարկվի պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից:

**Պարզաբանում 2:** Արտաքին գովազդի պայմանագիրը կարող է կնքվել հայտերի վերջնաժամկետից հետո՝ պայմանագիրը կնքելուց 3 աշխատանքային օր հետո, մեկ ամիս ժամկետով:

**Հարցադրում 3:** «Գլխավոր փորձ և կատարողների մասնակցություն» խնդրում ենք հաստատել՝ արդյոք 2026 թվականի հոկտեմբերի 2-ին նախատեսված 4–5 ժամանոց գլխավոր փորձին պարտադիր է հրավերում նշված բոլոր կատարողների, խմբերի և հաղորդավարների ամբողջ կազմով մասնակցությունը, թե թույլատրվում է նրանց տեխնիկական ներկայացուցիչների կամ մասնակի կազմերի մասնակցությունը:

**Պարզաբանում 3:** Միջոցառումից մեկ օր առաջ՝ հոկտեմբերի 02-ին, պետք է կատարվի բեմի հավաքման և տեխնիկայի մոնտաժման աշխատանքները: Համերգի գլխավոր փորձը կարող է անցկացվել հոկտեմբերի 03-ին՝ ոչ ուշ, քան ժամը 15:00-ին անձամբ կատարողների կողմից:

**Հարցադրում 4:** «Կատարողների գրավոր հավաստումներ» խնդրում ենք պարզաբանել, թե պայմանագրի կնքումից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվող հավաստումների համար սահմանվա՞ծ է պարտադիր ձև, և արդյոք ընդունելի են կատարողի լիազորված ներկայացուցչի կամ նրա հետ պայմանագիր կնքած իրավաբանական անձի կողմից ստորագրված հավաստումները:

**Պարզաբանում 4:** Հավաստման փաստաթղթի ձևը ազատ ոճի է, սակայն հավաստումը պետք է ստորագրված և հնարավորության դեպքում կնքված լինի անձամբ կատարողների կողմից:

**Հարցադրում 5:** «Տեսա-լուսանկարահանման արդյունքների հանձնում» տեխնիկական բնութագրով պահանջվում է առնվազն 200 մշակված լուսանկար և երկու տեսահոլովակ՝ 1–2 և 7–10 րոպե տևողությամբ, սակայն դրանց հանձնման վերջնաժամկետը նշված չէ: Խնդրում ենք սահմանել վերջնական նյութերը պատվիրատուին հանձնելու ժամկետը, ձևաչափերը, կրիչը կամ փոխանցման եղանակը և թույլատրելի շտկումների քանակը:

**Պարզաբանում 5:** 1-2 րոպեանոց տեսահոլովակը տրամադրվում է համերգի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում, 7-10 րոպեանոցը տեսահոլովակը և 200 մշակված լուսանկարները՝ 72 ժամվա ընթացքում, որոնք կարող են տրամադրվել էլեկտրոնային կրիչի կամ փոխանցվել ամպային հավելվածով:

**Հարցադրում 6:** «Հրավառության քանակների մեկնաբանություն» խնդրում ենք հաստատել հրավառության աղյուսակի «զարկերի քանակ» և «քանակ/տուփ» սյունակներում նշված թվերի կիրառման ձևը՝ արդյոք «զարկերի քանակը» մեկ տուփի՞, թե ամբողջ պահանջվող քանակի ցուցանիշն է: Խնդրում ենք նաև հաստատել, թե թվարկված բոլոր տեսակի համակարգերն ու ամբողջ քանակները պարտադիր են, թե մասնագիտական նախագծով թույլատրվում է դրանց համարժեք փոխարինում կամ քանակների փոփոխություն՝ պահպանելով 3–5 րոպե տևողությունն ու պահանջվող արդյունքը:

**Պարզաբանում 6:** Հարգելի գործընկեր, պարզաբանում չի տրամադրվում, քանի որ հարցումը վերաբերվում է Մասնակցի կողմից առաջարկվելիք ծառայության տեխնիկական բնութագրի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի համարժեքության համապատասխանությանը (հիմք ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետ): Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված են տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջները:

**Հարցադրում 7:** «Պիրոտեխնիկական հատուկ էֆեկտներ» խնդրում ենք հաստատել՝ Sonic Hize SH 001, Fier Jet FJX-002 և Pyro Jet F601S համակարգերի համար նշված սարքերի ու զարկերի քանակները նվազագույն պարտադիր պահանջնե՞ր են, և համարժեք այլ արտադրողների սարքավորումների կիրառման դեպքում ինչ փաստաթղթերով պետք է հիմնավորվի համարժեքությունը:

**Պարզաբանում 7:** Հարգելի գործընկեր, պարզաբանում չի տրամադրվում, քանի որ հարցումը վերաբերվում է Մասնակցի կողմից առաջարկվելիք ծառայության տեխնիկական բնութագրի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի համարժեքության համապատասխանությանը (հիմք ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետ): Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված են տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջները:

**Հարցադրում 8:** «LED էկրանների կառուցվածք» խնդրում ենք հաստատել՝ 48 քմ ընդհանուր մակերեսը և երեք էկրանների՝ 12+12+24 քմ բաժանումը պարտադիր անփոփոխ պահանջնե՞ր են, թե թույլատրվում է նույն կամ ավելի մեծ ընդհանուր մակերես ապահովող այլ կառուցվածք՝ պատվիրատուի հետ համաձայնեցմամբ:

**Պարզաբանում 8:** Հարգելի գործընկեր, պարզաբանում չի տրամադրվում, քանի որ հարցումը վերաբերվում է Մասնակցի կողմից առաջարկվելիք ծառայության տեխնիկական բնութագրի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի համարժեքության համապատասխանությանը (հիմք ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետ): Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված են տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջները:

**Հարցադրում 9:** «Բեմի և տեխնիկական լուծումների համարժեքություն» խնդրում ենք պարզաբանել՝ առաջարկվող սարքավորումների համարժեքությունը հայտի ներկայացման փուլում արդյոք պետք է հաստատվի առանձին տեխնիկական փաստաթղթերով, արտադրողի տվյալաթերթերով կամ որևէ այլ ապացույցով: Եթե այո, խնդրում ենք նշել հայտով ներկայացվող պարտադիր փաստաթղթերի ցանկը:

**Պարզաբանում 9:** Հարցելի գործընկեր, պարզաբանում չի տրամադրվում, քանի որ հարցումը վերաբերվում է Մասնակցի կողմից առաջարկվելիք ծառայության տեխնիկական բնութագրի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի համարժեքության համապատասխանությանը (հիմք ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 22-րդ ենթակետ): Միաժամանակ տեղեկացնում ենք, որ հրավերով սահմանված են տեխնիկական բնութագրի նվազագույն պահանջները:

**Հարցադրում 10:** «Թույլտվությունների շրջանակ» խնդրում ենք նշել՝ բացի հրավառության կազմակերպման թույլտվությունից և արտաքին գովազդի վճարներից, միջոցառման անցկացման, դրոնով նկարահանման, բեմի տեղադրման, երթևեկության սահմանափակման կամ այլ աշխատանքների համար պահանջվող թույլտվությունները ստանում է Կատարո՞ղը, թե՞ Պատվիրատուն:

**Պարզաբանում 10:** Միջոցառման անցկացման հետ կապված բոլոր թույլտվությունները ստանում և ապահովում է Կատարողը:

**Հարցադրում 11:** «Վճարման պայմաններ և կանխավճար» խնդրում ենք հաստատել՝ սույն պայմանագրով նախատեսվու՞մ է կանխավճար: Եթե այո, խնդրում ենք նշել դրա չափն ու վճարման ժամկետը: Եթե կանխավճար նախատեսված չէ, խնդրում ենք հաստատել, որ ամբողջ վճարումը կատարվելու է ծառայության ամբողջական ընդունումից հետո՝ հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

**Պարզաբանում 11:** Սույն ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծով կանխավճար նախատեսված չէ:

**Հարցադրում 12:** «Ապահովումների հաշվարկման հիմք» խնդրում ենք հաստատել՝ հայտի 5 տոկոս ապահովումը հաշվարկվում է 31,000,000 դրամ նախահաշվային գնից, իսկ ընտրված մասնակցի որակավորման 15 տոկոս և պայմանագրի 10 տոկոս ապահովումները՝ համապատասխանաբար նախահաշվային գնից, թե աճուրդի արդյունքում ձևավորված պայմանագրային գնից:

**Պարզաբանում 12:** Սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացվող հայտի, որակավորման, պայմանագրի կատարման ապահովումները ներկայացվում են կամ կանխիկ փողի, կամ բանկերի կողմից տրամադրված երաշխիքների ձևով՝ հաշվարկված գնման գնի (նախահաշվային գնի՝ 31.000.000 ՀՀ դրամի) նկատմամբ, որոնց ներկայացման ձևը և հաշվարկման կարգը սահմանված է հրավերով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող **Պավել Գաբրելյանին:**

Հեռախոս՝ **093-74-48-26:**

Էլեկտրոնային փոստ՝ **qaxgnumner@mail.ru**:

**«ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2026/5»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով.

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ** | ______ (ստորագրությունը) | **Սևակ Վարդանյան** |
| **Հանձնաժողովի անդամներ** | ______ (ստորագրությունը) | **Արմինե Զաքարյան** |
| | ______ (ստորագրությունը) | **Գառնիկ Բեգլարյան** |
| **Հանձնաժողովի քարտուղար** | ______ (ստորագրությունը) | **Պավել Գաբրելյան** |

**ЗАЯВЛЕНИЕ**

**О РАЗЪЯСНЕНИИ ПРИГЛАШЕНИЯ**

**Настоящий текст объявления утвержден решением оценочной комиссии № 2 от 07 сентября 2026 года и публикуется в соответствии со статьей 29 Закона РА «О закупках»**

**Код процедуры: «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2026/5»**

Оценочная комиссия процедуры закупки под кодом **«ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2026/5»**, организованный с целью приобретения **услуг по организации праздничных мероприятий, посвященных Дню основания города Чаренцаван общины Чаренцаван**, ниже представляет запросы, полученные **03 сентября 2026 года** по приглашению с тем же кодом, и разъяснения, предоставленные по этому поводу **07 сентября 2026 года**:

**Запрос N 1:** В технической спецификации «Металлические ограждения» указано, что Исполнитель должен обеспечить «металлические ограждения — около», однако требуемая общая длина или количество не указаны. Просим определить требуемый тип, высоту, общий погонный метр и схему установки ограждений.

**Разъяснение N 1:** Металлические ограждения — не менее 300 погонных метров, длина одного ограждения — не менее 2 метров, высота — 1–1,1 метра. Схема установки — согласно месту проведения мероприятия.

**Запрос N 2:** В требовании «Срок наружной рекламы» указано, что за один месяц до мероприятия на административной территории общины Чаренцаван необходимо разместить две наружные рекламы размером 6×3 м. Мероприятие запланировано на 3 октября 2026 года, тогда как крайний срок подачи заявок — 10 сентября 2026 года, и договор может быть заключен после этой даты. Просим разъяснить: с какой даты отобранный участник обязан разместить наружную рекламу и будет ли фактический срок исполнения рассчитываться со дня вступления договора в силу?

**Разъяснение N 2:** Договор наружной рекламы может быть заключен после крайнего срока подачи заявок — в течение 3 рабочих дней после заключения договора, сроком на один месяц.

**Запрос N 3:** В требовании «Генеральная репетиция и участие исполнителей» просим подтвердить: обязательно ли участие всех указанных в приглашении исполнителей, групп и ведущих в полном составе в 4–5-часовой генеральной репетиции, запланированной на 2 октября 2026 года, или допускается участие их технических представителей либо частичного состава?

**Разъяснение N 3:** За день до мероприятия, 02 октября, должны быть проведены работы по сборке сцены и монтажу техники. Генеральная репетиция концерта может быть проведена 03 октября не позднее 15:00 лично исполнителями.

**Запрос N 4:** В требовании «Письменные подтверждения исполнителей» просим разъяснить: установлена ли обязательная форма для подтверждений, представляемых в течение трех рабочих дней после заключения договора, и приемлемы ли подтверждения, подписанные уполномоченным представителем исполнителя или юридическим лицом, заключившим с ним договор?

**Разъяснение N 4:** Форма подтверждающего документа свободная, однако подтверждение должно быть подписано и, по возможности, заверено печатью лично исполнителями.

**Запрос N 5:** В требовании «Сдача результатов фото- и видеосъемки» технической спецификации требуется не менее 200 обработанных фотографий и два видеоролика продолжительностью 1–2 и 7–10 минут, однако крайний срок их сдачи не указан. Просим определить срок сдачи финальных материалов заказчику, форматы, носитель или способ передачи, а также допустимое количество правок.

**Разъяснение N 5:** 1-2-минутный видеоролик предоставляется в течение 24 часов после окончания концерта, 7-10-минутный видеоролик и 200 обработанных фотографий — в течение 72 часов, которые могут быть предоставлены на электронном носителе или переданы через облачное приложение.

**Запрос N 6:** В требовании «Толкование количества фейерверков» просим подтвердить порядок применения чисел, указанных в столбцах «количество залпов» и «количество/коробка» таблицы фейерверков: является ли «количество залпов» показателем для одной коробки или для всего требуемого количества? Просим также подтвердить, являются ли все перечисленные типы систем и полный объем обязательными, или же по профессиональному проекту допускается их эквивалентная замена или изменение количества при сохранении продолжительности в 3–5 минут и требуемого результата.

**Разъяснение N 6:** Уважаемый партнер, разъяснение не предоставляется, так как запрос касается соответствия эквивалентности технической спецификации услуги, предлагаемой Участником, технической спецификации, предусмотренной приглашением (основание: подпункт 22 пункта 32 постановления Правительства РА № 526-Н от 04.05.2017г.). Одновременно сообщаем, что приглашением установлены минимальные требования к технической спецификации.

**Запрос N 7:** В требовании «Специальные пиротехнические эффекты» просим подтвердить: являются ли количества устройств и залпов, указанные для систем Sonic Hize SH 001, Fier Jet FJX-002 и Pyro Jet F601S, минимальными обязательными требованиями, и в случае применения эквивалентного оборудования других производителей какими документами должно быть обосновано соответствие эквивалентности?

**Разъяснение N 7:** Уважаемый партнер, разъяснение не предоставляется, так как запрос касается соответствия эквивалентности технической спецификации услуги, предлагаемой Участником, технической спецификации, предусмотренной приглашением (основание: подпункт 22 пункта 32 постановления Правительства РА № 526-Н от 04.05.2017г.). Одновременно сообщаем, что приглашением установлены минимальные требования к технической спецификации.

**Запрос N 8:** В требовании «Конструкция LED-экранов» просим подтвердить: являются ли общая площадь 48 кв. м и разделение на три экрана 12+12+24 кв. м обязательными неизменными требованиями, или по согласованию с заказчиком допускается иная конструкция, обеспечивающая такую же или большую общую площадь?

**Разъяснение N 8:** Уважаемый партнер, разъяснение не предоставляется, так как запрос касается соответствия эквивалентности технической спецификации услуги, предлагаемой Участником, технической спецификации, предусмотренной приглашением (основание: подпункт 22 пункта 32 постановления Правительства РА № 526-Н от 04.05.2017г.). Одновременно сообщаем, что приглашением установлены минимальные требования к технической спецификации.

**Запрос N 9:** В требовании «Эквивалентность сцены и технических решений» просим разъяснить: должно ли соответствие эквивалентности предлагаемого оборудования на этапе подачи заявки подтверждаться отдельными техническими документами, техническими паспортами производителя или иными доказательствами? Если да, просим указать перечень обязательных документов, представляемых вместе с заявкой.

**Разъяснение N 9:** Уважаемый партнер, разъяснение не предоставляется, так как запрос касается соответствия эквивалентности технической спецификации услуги, предлагаемой Участником, технической спецификации, предусмотренной приглашением (основание: подпункт 22 пункта 32 постановления Правительства РА № 526-Н от 04.05.2017г.). Одновременно сообщаем, что приглашением установлены минимальные требования к технической спецификации.

**Запрос N 10:** В требовании «Рамки разрешений» просим указать: помимо разрешения на организацию фейерверка и выплат за наружную рекламу, разрешения, требуемые для проведения мероприятия, съемки с дрона, установки сцены, ограничения дорожного движения или выполнения иных работ, получает Исполнитель или Заказчик?

**Разъяснение N 10:** Все разрешения, связанные с проведением мероприятия, получает и обеспечивает Исполнитель.

**Запрос N 11:** В требовании «Условия оплаты и аванс» просим подтвердить: предусматривается ли данным договором аванс? Если да, просим указать его размер и срок выплаты. Если аванс не предусмотрен, просим подтвердить, что вся оплата будет произведена после полного приема-сдачи оказанных услуг на основании акта приема-передачи.

**Разъяснение N 11:** Согласно проекту договора, предусмотренному приглашением к данной процедуре, аванс не предусмотрен.

**Запрос N 12:** В требовании «Основа расчета обеспечений» просим подтвердить: рассчитывается ли обеспечение заявки в размере 5 процентов от сметной стоимости 31 000 000 драмов, а обеспечения квалификации выбранного участника в размере 15 процентов и договора в размере 10 процентов — от сметной стоимости или от цены договора, сформированной по результатам аукциона?

**Разъяснение N 12:** В рамках данной процедуры обеспечения заявки, квалификации и исполнения договора представляются либо в виде наличных денежных средств, либо в виде банковских гарантий, выданных банками, рассчитанных от цены закупки (сметной стоимости — 31 000 000 драмов РА), порядок расчета и форма представления которых установлены приглашением.

Для получения дополнительной информации, связанной с этим объявлением, вы можете обратиться к координатору закупок **Павлу Габреляну**.

Телефонный номер: **093-74-48-26**

Электронный адрес: **qaxgnumner@mail.ru**:

**Оценойная комиссия по процедуре закупки под кодом «ՉՀ-ԷԱՃԾՁԲ-2026/5»**

| | | |
|---|---|---|
| **Председатель комиссии** | (подпись) | **Севак Варданян** |
| **Члены комиссии** | (подпись) | **Армине Закарян** |
| | (подпись) | **Гарник Бегларян** |
| **Секретарь комиссии** | (подпись) | **Павел Габрелян** |